



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՅԱՆՎԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

**WESTERN PRELACY**

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ԵՐԿՐՈՐԴ ՀՈԳԵՒՈՐ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ «ՆՈՐ ՍԿԻԶԲ»

9-11 Ապրիլ 2010-ին, Հովանաւորութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ՝ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի, եւ կազմակերպութեամբ՝ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Երիտասարդաց միութեան կեդրոնական մարմինի եւթայանձնախումբին, տեղի ունեցաւ եռօրեայ հոգեւոր համագումար մը, Հ.Ե.Դ.ի ճամբարին մէջ, Փայնզ Զամբ:

Համագումարի ընդհանուր թեման էր «Նոր Սկիզբ», որուն մասնակցեցան Արեւմտեան Թեմի եկեղեցիներու երիտասարդ-երիտասարդուհիներէն աւելի քան յիսուն հոգի, հոգեւոր առաջնորդութեամբ Առաջնորդարանիս Քրիստոսնեական Բաժանմունքի վարիչներէն՝ Հոգեշ. Տ. Պարթեւ Կրդ. Կիլիկիմեանի:

Ուրբաթ գիշեր, բանակավայր հասնելէ ետք, երիտասարդները մասնակցեցան երեկոյեան ժամերգութեան առաջնորդութեամբ Հայր Սուրբին եւ սարկաւազներուն: Ապա երիտասարդները ունեցան ծանօթացումի ժամ՝ ստեղծելով մտերմիկ մթնոլորտ մը:

Շաբաթ, առաւօտ կանուխ, երիտասարդները լեռնագնացութեան մասնակցեցան, վայելելով Աստուծոյ ստեղծագործութիւնը՝ հրաշալի բնութիւնը, ինչպէս նաեւ աղօթքով դիմաւորելու արշալոյսը:

Համագումարը սկսաւ առաւօտեան աղօթքներով եւ ժամերգութեամբ: Արձանագրուած վիտեօերիզով, Սրբազան Հայրը երիտասարդներուն իր պատգամը փոխանցեց, որուն մէջ յայտնեց իր գնահատանքն ու ուրախութիւնը ի տես երիտասարդներու աշխոյժ մասնակցութեան եւ տուաւ իր հոգեւոր խրատները, կոչ ուղղելով բոլորին՝ զգուշանալու մեզ շրջապատող աղանդաւորներէ եւ կեղծ ու խաբեպատիր ուսուցումներէ: Ան յիշեցուց նաեւ, թէ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսը 2010 տարին հռչակած է «ՀԱՅ ԿՆՈՋ ՏԱՐԻ», յիշեցնելով Հայ կնոջ կարեւոր դերը Հայ Եկեղեցիէն եւ Հայ ընտանիքէն ներս: Ան նաեւ շեշտեց հոգեւոր կեանքի կարեւորութիւնը երիտասարդներուն համար: Այս առիթով նաեւ, Սրբազան Հայրը համագումարին մասնակցող իւրաքանչիւր երիտասարդի նուիրեց Արեւմտեան Թեմի հրատարակած երկլեզու Ս. Պատարագի գիրքէն օրինակ մը:

Ռիթա Տոքմեճեան ներկաներուն փոխանցեց ենթայանձնախումբին բարիգալուստի խօսքը եւ բոլորի անունով շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդ Սրբազանին, երիտասարդութեան հանդէպ իր ցուցաբերած հայրական խնամքին ու հետաքրքրութեան համար: Երիտասարդաց Յանձնախումբի Կեդրոնական Մարմինի ատենապետ՝ Րաֆֆի Նալճեան, իր կարգին, խօսք ամենելով շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդ Սրբազան Զօր իր խնամքին համար, Զայր Պարթեւին՝ իր հոգեւոր առաջնորդութեան համար, համագումարի կազմակերպիչ ենթայանձնախումբին՝ տարած աշխատանքին համար եւ ներկաներուն՝ իրենց մասնակցութեան համար, մաղթելով, որ սոյն համագումարի աւարտին բոլորը վերադառնան վերանորոգուած հոգիներով ու հաւատքով:

Զայր Սուրբը իր առաջին դասախօսութեամբ ներկայացուց ներկայ կեանքէն ներս իւրաքանչիւր անձի Նոր Սկիզբի մասին, առատօրէն մեջբերումներ կատարելով Աստուածաշունչէն, զորս երկվեզու ընթերցեցին երիտասարդները: Զայր Սուրբի դասախօսութենէն ետք երիտասարդները խումբերու բաժնուեցան եւ մասնակցեցան կազմակերպուած խմբային աշխատանքին:

Կեսօրուան ճաշէն ետք, Զայր Սուրբը ներկայացուց իր երկրորդ դասախօսութիւնը, որուն մէջ բացատրեց թէ ինչպէս կրնանք պատրաստուիլ Նոր Սկիզբի մը Երկնային կեանքէն ներս, դարձեալ մեջբերումներ կատարելով Աստուածաշունչէն եւ Զայրերու գրականութենէն:

Երկու հոգիներ իրենց հոգեւոր նորոգութեան վկայութիւնը տուին, որոնք կենդանի ապրումներով խօսեցան ու քաջալերեցին երիտասարդները՝ համագումարին ներշնչած թեմայով նորոգուելու Քրիստոսով: Իր կեանքի վկայութիւնը տուաւ Լիբանանէն՝ Զոզ. Զայր Մակար Վրդ. Աշգարեան, որուն հետ ուղիղ կապակցութիւն ստեղծեցին երիտասարդները ինթըրնետային միջոցով: Իսկ երկրորդ վկայութիւնը տուաւ երիտասարդ ընտանիքի մը հայրը՝ Նազօ Աղազարեան, վկայելով թէ ինչպէս Աստուծոյ հզօր ուժով իր կեանքը լրիւ փոխուեցաւ ու ներկայիս ուրախութեամբ եւ զԱստուած փառաւորելով կ'ապրի իր նոր կեանքը:

Երեկոյեան տեղի ունեցաւ աղօթքի պահ: Երիտասարդները իրենց մեղքերը գրեցին թղթիկներուն վրայ եւ այդ թղթիկները այրեցին կրակին մէջ: Անոնք նաեւ տարբեր թղթիկներու վրայ գրեցին իրենց խնդրանքները Աստուծմէ եւ ապա հաւաքական աղօթք կատարեցին եւ բոլորը միասին ծնկաչոք երգեցին «Տէր Ողորմեա»ն, խաղաղութիւն խնդրելով իրենց հոգիներուն, համայն աշխարհին եւ հին ու նոր ննջեցելոց հոգիներուն:

Կիրակի առաւօտ դարձեալ երիտասարդները մասնակցեցան լեռնագնացութեան եւ կատարեցին Արեւազալի ժամերգութիւնը, ինչպէս նաեւ Ս. Պատարագէն բազմաթիւ երգեր երգեցին: Նախաճաշէն ետք երիտասարդները կարգով խօսք առին եւ իրենց տպաւորութիւններն ու զգացումները փոխանցեցին եռօրեայ համագումարին մասին: Աւարտին, «Լուսաւորիչ» երիտասարդաց երգչախումբի անդամներէն որոնք ներկայ էին համագումարին, հոգեւոր կարգ մը երգերով խանդավառեցին իրենց ընկերները:

Բոլորին սիրտերը ցնծութեամբ լեցուն էին: Անոնք վերանորոգուած հոգիներով իրենց տունները վերադարձան Կիրակի երեկոյեան, իրենց հետ

տանելով Հօր Աստուծոյ, Յիսուս Քրիստոսի եւ Սուրբ Հոգիին պարգեւած լուսաւորութիւնն ու խաղաղութիւնը:

Ռուպինա Գապիրեան

## **ACYA SPIRITUAL REVIVAL II “NEW BEGINNING”**

On the weekend of April 9<sup>th</sup> to the 11<sup>th</sup>, 2010, the Armenian Church Youth Association (ACYA), under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, held the Spiritual Revival II “New Beginning” religious retreat led by Very Rev. Fr. Barthev Gulumian and organized by the ACYA Sisters’ Guild Sub-committee.

On the evening of April 9<sup>th</sup>, over 50 youth from various Prelacy churches gathered at St. Mary’s Church in Glendale to depart to AYF Camp. Upon arrival, the youth were by a member of the organizing committee. The weekend began with an Evening Service lead by Very Rev. Fr. Barthev Gulumian, and an introduction of each youth.

Saturday, April 10<sup>th</sup>, began with a hike, followed by Morning Service. After the service, the youth viewed the taped message of the Prelate. All of us have experienced new beginnings in our lives, such as moving to a new city, starting a new job or school, making new friends, and so on, said the Prelate. However, when we accept our Lord Jesus Christ as our personal Savior, we experience a new beginning like no other. Our hearts and souls are transformed and every day becomes a new beginning when we let God lead and direct our path. "Let us recognize what it is we need to let go of to move into the new, ask God to help us to release the negatives of the past, and follow His plan for our lives; for a new beginning is discovered as we trust the plan of God. Let us admit our spiritual needs, repent for our old lives, receive through prayer Jesus Christ in our hearts, and accept the new identity and life God has granted us through His Son our Lord Jesus Christ. And let us thank God for His promise and gift of making all things new for us who believe, asking Him to help us cast off the old and receive His gift of joy, peace, and a new beginning in His Son", concluded the Prelate.

ACYA Chairman Raffi Naljian then delivered his message to the participants. In the afternoon Fr. Barthev gave the first lecture entitled, “New beginning in this lifeՄՆ. The youth learned that in order to have a new beginning, an individual must renew his/her heart, soul and mind. After the lecture, the youth divided into seven groups for a group activity where they presented a new beginning from the Bible through a skit or reading. Each group researched one of the following new beginnings: Noah, Virgin Mary, Mary Magdalene, David, Paul, Abraham, and Moses. After a break, the second lecture was presented by Fr. Barthev entitled, “New beginning in the after-life”. A question and answer session followed.

Following the lectures, two individuals were selected to present testimonials on a new beginning in their life. One was a priest from Lebanon who presented his testimonial through a live internet connection, and the other was a retreat participant who presented his revelations and new beginning as a Christian. When the testimonials were complete, there was a roundtable debate on whether women should be allowed into the priesthood and/or as preachers? Two individuals were selected to present this topic, which was followed by an active discussion.

Before the Saturday Evening Service, the youth wrote down their sins anonymously to later be burned in the fireplace. The youth also wrote down prayers that were placed in the middle of the room during the Evening Service for God to hear our prayers. The night ended with a religious movie *The Hiding Place*, and a bonfire.

Sunday, April 11<sup>th</sup>, the last day of the retreat, began with a morning hike, followed by Morning Service. After the service, each of the youth shared their experiences about the retreat, such as how they would be able to utilize the information learned from the Bible and their experiences in their everyday life to make a new beginning for themselves. The day ended with the singing of three religious songs by members of the "Lousavorich" choir.

Lydia Basmajian